Կարգապահական գործ թիվ ԿԳ-22017

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2022 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 123-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԹԻՎ ԿԳ/81-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՎԻԿՏՈՐՅԱ ՎԱԼԵՐԻԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյանի, Խորհրդի անդամներ՝ Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Գայանե Դեմիրչյանի, Մանե Կարապետյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի և Մարինե Ֆարմանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ **Նոննա Համբարձումյան**,

քննության առնելով փաստաբան Վիկտորյա Վալերիի Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 855) (**այսուհետ նաև՝ փաստաբան կամ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Գոհար Ավետիսյանը (այսուհետ՝ նաև Դիմող) դիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (այսուհետ՝ նաև Պալատ)՝ հայտնելով, որ մոտ 3 տարի առաջ դիմել է փաստաբան Վիկտորյա Պետրոսյանին՝ Երևան քաղաքի Շիրակի 2ա/2 շենք, 107 հասցեում գտնվող բնակարանի հետ կապված հարցերը լուծելու՝ դիմողին նշված բնակարանի միակ սեփականատերը ճանաչելու համար:

Դիմողը հայտնել է, որ նշված հարցի կարգավորման նպատակով իր և փաստաբանի միջև կնքվել է պայմանագիր, նրան տրամադրել է լիազորագրեր և վճարել 120.000 ՀՀ դրամ: Դիմողը նշել է, որ փաստաբան Վիկտորյա Պետրոսյանը 2,5 տարիների ընթացքում, մինչև 2022թ-ի հունվար ամիսը, հիշյալ բնակարանի հետ

կապված տարբեր դիմումներ, բողոքներ կազմելու համար իրենից պահանջել և ստացել է մոտ 500.000 ՀՀ դրամ գումար, սակայն ոչ միայն չի լուծել իր բնակելի տան հարցը, այլ նաև վնաս է հասցրել:

Դիմողը հավելել է, որ փաստաբանը անգործություն է ցուցաբերել, ինչպես նաև թերի աշխատանքի կատարել՝ ժամկետ է բաց թողնվել, անիմաստ դիմումներ և դատարանին չի ներկայացվել ճիշտ հայց:

Դիմողի պնդմամբ, մի շարք փաստաթղթեր գտնվում են փաստաբան Վիկտորյա Պետրոսյանի մոտ և նա հրաժարվում է դրանք վերադարձնել իրեն:

Դիմողը կից ներկայացրել է փաստաբան Վիկտորյա Պետրոսյանի կողմից կազմված հայցադիմումի, վճռաբեկ բողոքի, ինչպես նաև թիվ ԵԴ/30686/02/19 քաղաքացիական գործով ընդհանուր իրավասության դատարանի, քաղաքացիական վերաքննիչ և վճռաբեկ դատարանների որոշումները:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

2. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 21 հուլիսի 2022թ. թիվ 146-Ա/ԿԳ-22017 որոշման հիման վրա փաստաբան Վիկտորյա Վալերիի Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 855) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.1, 2.7.2, 3.5.5 և 3.8.4 ենթակետերի խախտման հատկանիշներով:

25.07.2022թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հասմիկ Բալաբեկյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը 20.02.2022 թվականին ներկայացրել է բացատրություն, որով ըստ էության հայտնել է նախկինում իր դիմում-բողոքում արդեն իսկ հայտնած տեղեկատվությունը, իսկ 21.02.2022 թվականին Դիմողի կողմից նախապատրաստողին է ներկայացվել Գոհար Ավետիսյանի կողմից տրված բացատրությունների հիմքում ընկած հանգամանքների վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր:

3.2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

04.08.2022թ. Պալատ է մուտքագրվել (մուտք՝ №-696-22) Փաստաբան Վիկտորյա Վալերիի Պետրոսյանի կողմից գրավոր բացատրություն, նշելով, որ Դիմողի

կողմից ստանձնած հանձնարարությունն ամբողջությամբ կատարված են, մասնավորապես.

Փաստաբանը 2022 թվականի սեպտեմբերի 21-ին ներկայացված բացատրությամբ հայտնել է, որ նախնական պայմանավորվածության և Դիմողի խնդրանքով վերցրել է մեկ դատական գործ, ըստ որի ինքը պետք է՝ ոչ թե հայցադիմումով, այլ դիմումով դիմեր դատարան Դիմողի ամուսնու մահից հետո, որպես ժառանգորդ իրավունքները ձևակերպելու համար: Մինչդեռ, Փաստաբանի պնդմամբ ինքը դիմողի համար մատուցել է հետևյալ իրավաբանական ծառայությունները՝

1. փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին դիմումով դիմել է դատարան:
2. Որպես Դիմողի ներկայացուցիչ դիմել է դատարան՝ հանցագործությամբ պատճառված վնասի հատուցման պահանջի մասին, Աստղիկ բժշկական կենտրոնի դեմ:
3. Որպես Դիմողի ներկայացուցիչ դիմել է դատարան՝ անվավեր ճանաչելու խարդախ գործարքի շնորհիվ կատարված առքուվաճառքի պայմանագիրը, սեփականության իրավունքի գրանցումը, ճանաչել Գոհար Ավետիսյանի ժառանգական իրավունքը Շիրակի փող. 2Ա/2 շ. 107 բնակարանի նկատմամբ պահանջների մասին:
4. Որպես Դիմողի ներկայացուցիչ դիմել է դատարան մինչև քրեական գործով վերջնական որոշում կայացնելը և դատարանում դատական վեճի ավարտը, Շենգավիթ, Շիրակի փողոց 2/2 շ. 107 բն. հասցեի բնակարանից հայցվորի վտարումը, այսինքն վտարելու ցանկացած գործողության կատարումից ձեռնպահ մնալու՝ պարտավորեցնելու պ/մ:
5. Անթիվ անհամար դիմումներ նոտարներին, նոտարական պալատ, ոստիկանության իրավաբանական վարչություն, արտակարգ իրավիճակների վարչություն, հարկադիր դիմակի համար տուգանելու վերաբերյալ, բանկեր իրեն հասանելիք գումարները չվերադարձնելու համար, դատարաններ անթիվ անհամար, դատախազություն, քննչական վարչություններ և այլն :

Փաստաբանի պնդմամբ ինքը ապահովել է նիստերին իր ներկայությունը, հետաձգվել են 2-3 նիստ, որոնցից մեկը հետաձգվել է կորոնավիրուսի հետ կապված, երկրում, իր կորոնավիրուսի վարակակիր լինելու պատճառով, ինչպես նաև դատավոր Լիզա Ռաֆիկի Գրիգորյանը չէր կարող նիստին ներկայանալ, որի մասին ինքը տեղեկացել է հեռախոսով:

Փաստաբանի պնդմամբ Դիմողի հետ Պայմանագիր չի կնքվել, որովհետև չգիտեր աշխատանքների անծայրածիր սկիզբը և վերջը, հետևաբար այն չի լուծվել, տրված է եղել մի լիազորագիր, որ Դիմողի կողմից այս տարվա փետրվարի 7-ին դադարեցրել է: Իսկ փաստաթղթերի մասով բոլորը պատճենված և վերադարձված է եղել Դիմողին, որոնց կողքերը Դիմողը ստորագրել է:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.</u>

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 22.09.2022թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողի կողմից առարկություններ չեն ներկայացվել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 23.09.2022 թվականին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 29.11.2022 թվականին ժամը, 19:15-ին Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, լսելով կողմերի բացատրությունները, հաշվի առնելով նաև Նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. 09.07.2019 թ. Գոհար Ավետիսյանի կողմից տրվել է լիազորագիր փաստաբան Վիկտորյա Վալերիի Պետրոսյանին՝ երեք տարի ժամկետով:

2. Լիազորագրի համաձայն Փաստաբանը լիազորվել է Դիմողի փոխարեն հանդես գալ նոտարական գրասենյակում՝ ընդունել և ձևակերպել ԱՐՄԵՆ ԿԱՌԼԵՆ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻ մահից հետո Դիմողին հասանելիք ամբողջ շարժական և անշարժ գույքը, որտեղ էլ այն գտնվի, ստանալ ժառանգության իրավունքի վկայագիրը, հաստատել իրավաբանական նշանակություն ունեցող փաստ, լինել Դիմողի ներկայացուցիչը ՀՀ դատական բոլոր ատյաններում, անձնագրային բաժնում, քաղաքապետարանում, թաղապետարանում, համատիրությունում, արխիվում, բանկերում, ՀՀ ճանապարհային ոստիկանությունում, բոլոր պետական և ոչ պետական մարմիններում, այլ անհրաժեշտ հիմնարկներում, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի սպասարկման գրասենյակում ստանալ սեփականության իրավունքի գրանցման վկայականը…..:

3. 20.09.2019 թվականին Դիմողի անունից Փաստաբանն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ներկայացրել է դիմում՝ փաստացի տիրապետման ուժով ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու պահանջի մասին:
4. Դիմողի անունից Փաստաբանը դիմել է ՀՀ Սյունիքի մարզի նոտարական տարածքի նոտարին՝ Կառլեն Առուստամյանի ժառանգությունը Գոհար Ավետիպանի կողմից ընդունելու վերաբերյալ:
5. Փաստաբանը 20.04.2021 թվականին Դիմողի անունից ներկայացրել է վերաքննիչ բողոք:
6. Փաստաբանը 15.07.2021 թվականին Դիմողի անունից ներկայացրել է վճռաբեկ բողոք:
7. Փաստաբանը Դիմողի անունից դիմել է ՀՀ ոստիկանության իրավաբանական վարչություն՝ խնդրելով կասեցնել ոստիկանության կողմից վտարման ցանկացած գործողություն:
8. 21.12.2020 թվականին դիմել է ՀՀ Սյունիքի մարզի նոտարական տարածքի նոտար Առնո Առաքելյանին Դիմողի ամուսնու հոր ժառանգությունն ընդունելու պահանջով:
9. Որպես դիմողի ներկայացուցիչ վերջինիս հետ միասին մասնակցել է քրեական գործով ներկայացվող հաղորդմանը:
10. Դիմողի անունից բողոքարկել է 25.09.2021 թվականի քրեական գործի հարուցումը մերժելու մասին հետաքննիչի որոշումը:
11. 25.10.2021 թվականին Դիմողի անունից ներկայացրել է դիմում (այսուհետ 25.10.2021 թ. Դիմում) «ՀԷՑ» ՓԲԸ-ին ք. Երևան, Շենգավիթ Շիրակի 2Ա/2 շենք 107 բն. Հասցեի էլեկտրամատակարարումը վերականգնելու խնդրանքով:
12. Ի պատասխան 25.10.2021 թ. Դիմումին 28.10.2021 թվականին ստացվել է Հայաստանի էլեկտրական ցանցեր ՓԲԸ-ի պատասխան, համաձայն որի վերականգնվել է նշված հասցեի էլեկտրամատակարարումը:
13. 09.08.2021 թվականին Դիմողի անունից հայցադիմում է ներկայացրել վարչական դատար ընդդեմ ՀՀ ոստիկանության՝ 05.07.2021 թվականի վարչական ակտը վերացնելու պահանջով:
14. Վարչական Դատարանի 16.08.2021 թվականի որոշմամբ ներկայացված հայցադիմումն ընդունել է վարույթ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 28.11.2022 թվականին տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Վիկտորյա Պետրոսյանը փաստաբանական գործունեության արտոնագիրը ստացել է 14.10.2008թ-ին, և

տեղեկանքի տրամադրման օրվա դրությամբ փաստաբանը չունի կարգապահական տույժ:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի կողմից 21 հուլիսի 2022թ. թիվ 146-Ա/ԿԳ-22017 որոշմամբ փաստաբան Վիկտորյա Վալերիի Պետրոսյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է՝

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.7.1-ին ենթակետի համաձայն՝ *Փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հռետորական արվեստի տիրապետում:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի համաձայն՝ *Պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ ի թիվս այլնի, վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):*

Սույն կարգապահական գործի նյութերից երևում է այն, որ Փաստաբանը գործել է իրավաչափ և Կանոնագրքի դրույթներին համապատասխան

Մասնավորապես՝ **Կանոնագրքի 1.1 կետի 3-րդ և 4-րդ պարբերությունների** համաձայն՝ ***Փաստաբանի գործունեությունը փաստաբանի վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտականություններ՝ - վստահորդի նկատմամբ: Փաստաբանը*** *վստահորդին բացատրում է նրա իրավունքները, պարտականությունները և դրանց իրացման իրավական հետևանքները, ինչպես նաև* ***ջանասիրաբար ներկայացնում է իր վստահորդի շահերը:***

Կանոնագրքի 2.6.3 ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը, իր վստահորդի շահերից ելնելով,* ***պետք է ձեռնարկի ողջամիտ ջանքեր վերջինիս գործի դատական****, վարչական, արբիտրաժային կամ իրավական գործընթացի արագ իրականացմանը նպաստելու համար:*

Կանոնագրքի վերը նշված իրավական նորմերի տառացի վերլուծության և համակարգային մեկնաբանության արդյունքում Խորհուրդը հանգում է այն եզրակացության, որ Փաստաբանը պարտավոր է ջանասիրաբար ներկայացնի իր վստահորդի շահերը և ձեռնարկի ողջամիտ միջոցներ վստահորդի իրավունքների պաշտպանության համար:

Ներկայացված ապացույցների շրջանակներում Խորհուրդը փաստում է, որ Փաստաբանը ստանձնած հանձնարարության կատարման համար իրականացրել է անհրաժեշտ մասնագիտական գործողություններ:

Խոորհուրդն, արձանագրում է, որ փաստաբանի կողմից ձեռնարկվել են ողջամիտ ջանքեր հանձնարարությունն արագ և արդյունավետ կատարելու համար: Ուսումնասիրելով Փաստաբանի կողմից իրականացված աշխատանքների ծավալը և գործի նյութերում առկա բազմաթիվ փաստաթղթեր, Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանն փորձել է իրակնացնել անհրաժեշտ գործողություններ Դիմողի շահերի իրացման ուղղությամբ, մասնավորապես՝ տարբեր հարցերով նրա շահերի պաշտպանության համար դիմել է զանազան պետական և ոչ պետական մարմիններ և ձեռնարկել է անհրաժեշտ միջոցներ: Փորձել է և սկզբնապես հաջողել է կանխել Դիմողին բնակարանից վտարումը: Այդ կապակցությամբ ներկայացրել է համապատասխան դիմումներ, ինչպես նաև բողոքարկել է վտարման վերաբերյալ վարչական ակտը վարչական դատարան, դիմել է ԱԻՆ Դիմողի բնակության հասցեում բռնկված հրդեհի կանխման համար, դիմել է Դիմողի բնակության հասցեում ՀԷՑ էլեկտրամատակարարման վերականգնման համար, Դիմողի իրավունքների պաշտպանության համար քրեական գործերով ներկայացրել է դիմումներ և բողոքարկել գործը քննող մարմնի որոշումները, ապահովել է դատական նիստերին մասնակցություն հարուցված քաղաքացիական գործով և այլն: Այսինքն՝ Փաստաբանի կողմից ձեռնարկվել են բազմաթիվ միջոցներ Դիմողի տարբեր իրավունքների և շահերի պաշտպանության համար:

Արդյունքում ստացվում է այն, որ Փաստաբանը ջանասիրաբար է ներկայացրել իր

վստահորդի շահերը և ձեռնարկել է ողջամիտ միջոցներ վստահորդի իրավունքների պաշտպանության համար: Հետևաբար Փաստաբանի գործողությունները եղել իրավաչափ են և համապատասխանում եմ Կանոնագրքի 1.1 կետի 3-րդ և 4-րդ պարբերություններին և 2.6.3 ենթակետին:

Միաժամանակ Խորհուրդը արձանագրում է այն, որ **համաձայն Կարգի 7.2.6 ենթակետի՝** *կարգապահական խախտման փաստը* ***ապացուցված լինելու*** *վերաբերյալ* ***բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան*** *պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակում,* ***մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:***

Վերը նշված նորմի տառացի վերլուծության արդյունքում Խորհուրդը հանգում է այն եզրակացության, որ կարգապահական խախտման փաստն ապացուցված լինելու, բոլոր կասկածները, որոնք չեն փարատվել կարգապահական վարույթի պատշաճ ընթացակարգի շրջանակներում մեկնաբանվում են հօգուտ Պատասխանողի:

Խորհուրդը արձանագրում է նաև, որ **փաստաթղթերի չվերադարձնելու փաստը չի հաստատվում**, քանի որ Դիմողի և Պատասխանողի բացատրություններով իրարամերժ տեղեկություններ են ներկայացվել, ինչպես նաև Դիմողը հստակ տեղեկություններ չի կարողացել հայտնել իրեն չվերադարձված փաստաթղթերի վերաբերյալ, Դիմողի կողմից չի ներկայացվել որևէ ապացույց բնօրինակ փաստաթղթեր փաստաբանին հանձնած լինելու մասով: Ուստի Պատասխանողի կողմից Դիմողի փաստաթղթերն ամբողջությամբ Դիմողին չվերադարձնելու փաստը մնում է կասկածելի, իսկ ցանկացած կասկած, որը կարգապահական վարույթի պատշաճ ընթացակարգի շրջանակներում չի փարատվում, մեկնաբանվում է հօգուտ Պատասխանողի: Այլ կերպ ասած Պատասխանողի կողմից Դիմողին փաստաթղթերը վերադարձնելու փաստը չի հաստատվում սույն կարգապահական գործում առակ ապացույցներով, այսինքն նշված փաստը մնում է չապացուցված:

Այսպիսով, Խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա գրավոր ապացույցները, լսելով կողմերի բացատրությունները, արձանագրում է, որ Դիմողի կողմից բավարար չափով փաստարկված և հիմնավորված չեն այն պնդումները, համաձայն որի Փաստաբանը չի մատուցել պատշաճ իրավաբանական ծառայություններ իր հանձնարարության հետ կապված:

Օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարճում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա

բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Նկատի ունենալով, որ դիմողի կողմից նկարագրված հանգամանքները չեն հաստատվել, Խորհուրդը փաստաբանի վարքագիծը չի համարում Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 2.7.2 , 3.5.5 և 3.6.1-րդ ենթակետերին հակասող, ուստի Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ և 39.8-րդ հոդվածների պահանջներով՝

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Վիկտորյա Վալերիի Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 855) նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Կարեն Սարդարյան

29 նոյեմբերի 2022թ.
թիվ ԿԳ/171-Ա
ք. Երևան